

Կորոնավիրուս հիվանդություն (COVID-19)

1. Ի՞նչ պետք է անեմ, եթե ունեմ ախտանիշներ և կարծում եմ, որ վարակվել եմ նոր կորոնավիրուսով:

Շնչառական հիվանդություններ, օրինակ՝ մրսածություն, գրիպ և կորոնավիրուս հիվանդություն (COVID-19), ունեցող մարդկանց մեծ մասի մոտ կլինի մեղմ հիվանդություն, և նրանք կապաքինվեն համապատասխան տնային խնամքի միջոցով՝ առանց բուժաշխատողի մոտ գնալու անհրաժեշտության: Տարեցները, հղի կանայք և թույլ իմունային համակարգ կամ այլ բժշկական խնդիրներ ունեցող մարդիկ գտնվում են ավելի լուրջ հիվանդություն կամ բարդություններ ունենալու վտանգի տակ: Խորհուրդ ենք տալիս ուշադիր հետևել Ձեր ախտանիշներին և շտապ դիմել բուժօգնության, եթե Ձեր ախտանիշները վատթարանում են:

Եթե դժվարանում եք շնչել կամ փսխում եք, գնացեք շտապօգնության սենյակ կամ զանգահարեք 911: Հակառակ դեպքում ավելի լավ է նախքան Ձեր բժշկի մոտ գնալը զանգահարեք նրան:

Դուք նաև պետք է զանգահարեք բժշկին, եթե սերտ շփում եք ունեցել COVID-19-ով հիվանդ մարդու հետ:

2. Ի՞նչ պետք է անեմ, եթե ես ախտանիշներ չունեմ, սակայն մտածում եմ, որ հնարավոր է՝ վարակվել եմ նոր կորոնավիրուսով:

Եթե հիվանդ չեք, կարիք չկա որևէ բան անելու, բացի ամենօրյա կանխարգելիչ գործողություններ ձեռնարկելուց և հետևելուց, թե արդյոք Ձեզ մոտ կան շնչառական հիվանդության ախտանիշներ, օրինակ՝ ջերմություն և հազ: Հիվանդանալու դեպքում հետևեք վերը նշված ցուցումներին:

Ամենօրյա անձնական կանխարգելիչ գործողություններն են՝

- Հիվանդ ժամանակ մնացեք տանը: Մնացեք տանը առնվազն 24 ժամ, եթե առանց ջերմիջեցնող դեղորայքի ընդունման ջերմություն կամ ջերմության ախտանիշներ չունեք:
- Առնվազն 20 վայրկյան լվացեք ձեռքերն օժառով ու ջրով, հատկապես՝ սանհանգույց գնալուց հետո, ուտելուց առաջ, քիթը մաքրելուց, հազալուց կամ փռշտալուց հետո: Եթե ձեռքի տակ չկա օժառ և ջուր, օգտագործեք առնվազն 60% սպիրտ պարունակող սպիրտային ախտահանող միջոց:
- Հազալիս և փռշտալիս անձեռոցիկով ծածկեք բերանը, ապա դեմ նետեք անձեռոցիկն ու անմիջապես լվացեք ձեռքերը: Եթե չունեք անձեռոցիկ, օգտագործեք Ձեր հագուստի թևքը (այլ ոչ թե Ձեր ձեռքերը):
- Սահմանափակեք հիվանդ մարդկանց հետ շփումը:
- Մաքրեք և ախտահանեք այն առարկաներն ու մակերեսները, որոնց հաճախակի եք դիպչում: Օգտագործեք սովորական կենցաղային ախտահանիչ միջոց կամ անձեռոցիկներ:

3. Կարո՞ղ եմ անցնել նոր կորոնավիրուսի թեստը:

Եթե հիվանդ եք, Ձեր բուժաշխատողը կարող է որոշել, եթե թեստի կարիք ունեք: Միայն բուժաշխատողները կարող են իրականացնել COVID-19-ի թեստավորումը: Քանի որ մարդկանց մեծամասնությունը ժամանակի ընթացքում կապաքինվի հանգստի միջոցով, և կարիք չկա բժշկի գնալու, եթե Ձեզ մոտ առկա են մեղմ ախտանիշներ: Եթե Դուք հիվանդ եք և կարծում եք, որ պետք է անցնեք COVID-19-ի թեստը, զանգահարեք Ձեր բժշկին նախքան նրան այցելելը:

4. Ինչպե՞ս է բուժվում նոր կորոնավիրուսը:

Նոր կորոնավիրուս հիվանդության համար հատուկ բուժում չկա: Այդուհանդերձ, ախտանիշների մեծ մասը կարող է բուժվել:

Ներկայումս չկա նոր կորոնավիրուսը կանխող պատվաստանյութ: Չգուշացեք վաճառվող կեղծ ապրանքներից, որոնք պնդում են, թե իբր կարող են կանխել կամ բուժել այս նոր վիրուսը:

